

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի՝
2016 թ. հունիսի 15-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի
(հարցման կարգով)

ք. Երևան

Հարցման կարգով նիստին մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 27-ը (կից ներկայացվում է արձանագրության ստորագրացուցակը):

Օրակարգը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվության և տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության հաստատում:

1.«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվության և տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության հաստատում: Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանի կողմից Խորհրդի 32 անդամներին առաքվել են ԵՊՀ 2015 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվության և տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության նախագիծը և քվեարկության թերթիկները: Վերջիններս լրացրել և վերադարձրել են Խորհրդի անդամներից 27-ը: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4. կետի 7-րդ ենթակետով՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015 թվականի եկամուտների և ծախսերի կատարողականի վերաբերյալ հաշվետվության համառոտ տարբերակը հրապարակել www.azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2015 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունը՝ համաձայն հավելված 3-ի:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Մ. Մալխասյան